# community

The New Apostolic Church around the world

03/2023/AM

# Ծառայել Քրիստոսի հետ – Ներածություն

Խմբագրական
Վատ և լավ պահերին

Ժամերգություն
Ծառայել Քրիստոսի հետ - Ներածություն

Վարդապետական ուսմունք
Կանանց ձեռնադրություն՝ Հիսուս Քրիստոսը և եկեղեցին

New Apostolic Church
International

## Խմբագրական

3 Վատ և լավ պահերին

## Ժամերգություն

4 Ծառայել Քրիստոսի հետ - Ներածություն

## Այց Եվրոպա

10 Կրակը պետք է շարունակվի վառվել

## Մանկական անկյուն

12 Հիսուսն ու սամարացի կինը

14 Այցելություն Ռոզելին՝ Սեթուբալում /Պորտուգալիա/

## Տեսություն

16 Կանանց ձեռնադրություն՝ Հիսուս Քրիստոսը և եկեղեցին



Տիտղոսաթերթի լուսանկարը՝ Միխայել Օվինոյի
Շապիկի ետևի լուսանկարը՝ Թիմփանիի

# Վատ և լավ պահերին

Լուսանկարը՝ ՆԱԵ

Սիրելի եղբայրներ և քույրեր,

Ոչ ոք Աստծո կողմից մոռացված չէ: Նա գիտի քո մտքերը, նա գիտի քո խնդիրները, նա կիսում է քո ցավը: Վստահիր նրան: Նա կօգնի:

Ես ցանկանում եմ Սուրբ Հոգուց եկող այս ավետիսը ամենից առաջ նրանց ուղղել, ովքեր անցնում են դժվարություններով և նեղություններով: Շատ եղբայրներ և քույրեր ստիպված են ապրել հիվանդությունների հետ, մյուսները տխուր են տարբեր պատճառներով, շատերը խնդիրներ ունեն մասնագիտության հետ կապված, ընտանիքում, գործընկերության մեջ: Շատերն էլ ունեն ֆինանսական խնդիրներ:

Այս բարի լուրը ես ուզում եմ նաև նրանց ուղղել, ովքեր հակառակ կողմում են գտնվում, նրանց, ովքեր շատ գեղեցիկ պահեր են ապրել, նրանց, ովքեր պարզապես երջանիկ են, պարզապես ուրախ են: Հավանաբար նրանք մի քիչ ամաչում են, որ իրենք խնդիրներ չունեն: Նրանք ապրում են օրհնանք, Աստծո ներկայությունը: Դուք կարիք չունեք ամաչելու: Հիսուսը կիսում է ձեր ուրախությունը: Շնորհակալ եղեք նրան համապատասխանաբար և վայելեք օրհնանքը, որ Աստված երաշխավորում է ձեզ:

Սրտանց ողջույններ՝

Ժան-Լյուք Շնայդեր

# Ծառայել Քրիստոսի հետ – Ներածություն

Շուրջ 800 մասնակից սպասում էր գլխավոր առաքյալի այցին Նաիրոբիում / Քենիա/

Լուսանկարները՝ ընդարձակաստեղ Միհարդ Օլմեդոյի, Թեմփանի

Հեսու 24,15

Իսկ ես և իմ տունը Տիրոջն ենք պաշտում:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, երեկ մենք այստեղ երիտասարդների շրջանակով հրաշալի ժամանակ անցկացրեցինք, ինձ համար շատ գեղեցիկ էր Քենիայի, Ուգանդայի, Տանզանիայի և Հարավային Սուդանի բոլոր առաքյալների հետ հանդիպումը: Ես շատ եմ ցանկանում, որ նրանք, ովքեր կապված են մեզ հետ, զգան նույն ուրախությունը և կարողանան ապրել այն, ինչը մենք միասին զգացինք և ապրեցինք: Երեկ ես շատ ուրախացա, երբ կարողացա մի քանի առաքյալների աշխատանքային շրջանների տարբեր տաղավարներ այցելել: Երիտասարդներն այնտեղ ինձ բացատրեցին, թե ինչպես են նրանք ծառայում Տիրոջը եկեղեցում և եկեղեցուց դուրս:

Դուք ինձ ցույց տվեցիք, թե ինչ եք անում եկեղեցում և ինչ եք անում, երբ եկեղեցում չեք: Ես իսկապես գնահատում եմ դա, քանի որ դա շատ կարևոր բան է ցույց տալիս՝ որպես Աստծո զավակներ,

մենք երկու կյանք չունենք՝ մեկը, երբ եկեղեցում ենք, և մյուսը՝ մեր անձնականը, երբ եկեղեցում չենք: Մենք ցանկանում ենք լինել Քրիստոսի ճշմարիտ աշակերտները և ապրում ենք Քրիստոսի ուսմունքներով, երբ եկեղեցում ենք և, երբ եկեղեցուց դուրս ենք: Մենք ցանկանում ենք մեզ պահել որպես Քրիստոսի աշակերտներ ինչպես համայնքում, այնպես էլ մեր անձնական կյանքում: Տանը, որպես ամուսին և կին, սա շատ կարևոր բան է: Եկեք՝ որպես ամուսիններ և կանայք, լինենք Քրիստոսի ճշմարիտ աշակերտները: Մենք ցանկանում ենք լինել Քրիստոսի իսկական աշակերտները մեր ընտանիքներում, մեր ուսանողական կյանքում, մեր մասնագիտական կյանքում և մեր համայնքային կյանքում: Պատվիրաններին չհնազանդվելու պատճառ չկա մեր կյանքի որևէ ոլորտում: Եկեք միշտ լինենք Քրիստոսի ճշմարիտ աշակերտներն ու ծառաները:

Աստվածաշնչի այսօրվա խոսքը Հեսուի մասին է: Դուք գիտեք այդ պատմությունը: Նա Աստծո իսկական ծառան էր: Նա Մովսեսի հետ անցավ անապատը, և Մովսեսի պես Հեսուն էլ էր հավատում իր ժողովրդին Եգիպտոսից ազատելու և Ավետյաց երկիր առաջնորդելու աստվածային խոստմանը: Դա բարդ պատմություն էր, բայց Մովսեսն ու Հեսուն հավատացին Աստծո խոստմանը և վստահեցին Աստծուն:

Մենք ուզում ենք ծառայել Տիրոջը, բայց մենք ուզում ենք ծառայել նրան Քրիստոսի հետ:

Երբ Մովսեսը Հեսուին որպես սուրհանդակ ուղարկեց Քանան, նա վերադարձավ և ասաց. «Մի՛ վախեցեք այս ժողովրդից, Աստված խոստացել է, որ մեզ հետ է և նա մեզ հետ կլինի» (հմտ. Մվ. 14,6-9): Ցավոք, սուրհանդակներից ոչ բոլորն ունեին Աստծո հանդեպ նույն վստահությունը; իսկ Հեսուն շարունակեց ծառայել Տիրոջը:

Հաջորդելով Մովսեսին՝ նա ժողովրդին առաջնորդեց խոստացված երկիր և հաղթեց բոլոր թշնամիներին: Իր կյանքի վերջում նա հավաքեց մարդկանց՝ հիշեցնելու, որ Աստված պահել է իր խոստումը: Նա խնդրեց ժողովրդին երախտապարտ լինել դրա համար և ասաց. «Հիմա դուք կարող եք անել այն, ինչ ուզում եք, բայց ես և իմ տունը կծառայենք Տիրոջը» (տես՝ Հեսու 24:14,15):

Հեսուն ծառայում էր Աստծուն, քանի որ հավատում և վստահում էր նրա խոսքին: Աստվածային բոլոր խոստումները դեռ չէին կատարվել, բայց նա վստահեց Աստծո խոսքին, իսկ ավելի ուշ, երբ նա տեսավ, որ Աստված կատարել է իր խոստումը, երախտագիտությունից ելնելով ծառայեց Տիրոջը:

Սիրելի եղբայրներ և քույրեր, սա վերաբերում է նաև մեզ: Աստված մեզ մի հրաշալի բան է խոստացել: Նա ցանկանում է մեզ առաջնորդել դեպի իր թագավորությունը, որտեղ մենք կարող ենք ծառայել և կառավարել Քրիստոսի հետ: Նոր արարչագործության մեջ մենք ծառայելու ենք Տիրոջը: Մենք կփառաբանենք և կերկրպագենք նրան: Եվ ես ասում եմ սա նորից ու նորից: Անգամ հազարավոր տարիներ անց մենք դեռ բավական պատճառ կունենանք փառաբանելու Տիրոջը և շնորհակալություն հայտնելու նրան: Այն, ինչ նա կտա մեզ, այնքան մեծ է, որ մենք երբեք չենք դադարի գովաբանել ու շնորհակալություն հայտնել նրան: Այսպես մենք հավիտյան կծառայենք Տիրոջը :

Մենք երկրպագելու և փառաբանելու ենք նրա անունը և կառավարելու ենք նրա հետ: Մենք ոչ ոքի վրա չենք իշխի, այլ կմասնակցենք նրա փառքին, մեղքի դեմ նրա հաղթանակին և չարի վրա նրա տիրապետությանը: Սա այն խոստումն է, որ ունենք, և քանի որ մենք հավատում և վստահում ենք Նրա խոստմանը, եկեք ծառայենք Տիրոջը հիմա: Մենք ուզում ենք սովորել, թե ինչ ենք անելու հավիտյան:

Այն, ինչ Աստված խոստացել է մեզ, արդեն կատարվել է: Մենք արդեն Աստծուն շնորհակալ լինելու պատճառ ունենք: Մենք շնորհակալություն ենք հայտնում Աստծուն Հիսուս Քրիստոսի զոհաբերության համար:

Շնորհակալություն ենք հայտնում Աստծուն իր ընտրության համար: Մենք շնորհակալ ենք Աստծուն, որ դարձանք Աստծո զավակներ և կարողացանք ընդունել եկեղեցական խորհուրդները:

Երբեմն ասում են, որ քրիստոնեական հավատքը հիմնված է «արդեն» -ի և «դեռևս ոչ»-ի վրա: Երբ Հիսուսը եկավ երկիր, նա քարոզեց Աստծո գալիք թագավորությունը, բայց նաև ասաց, որ այն արդեն մարդկանց մեջ է (հմտ. Ղուկաս 17:21): Հիսուսը հաղթեց մեղքին և չարին: Դա արդեն եղել է և վերջնական է: Բայց այս հաղթանակի բոլոր հետևանքները դեռ տեսանելի չեն, քանի որ չարը դեռ հզոր է երկրի վրա: Մենք արդեն Աստծո զավակներ

## Պետք է Աստծուն սիրուց ելնելով ծառայել:

ենք, բայց թե ինչ կլինենք, դեռ բացահայտված չէ (հմտ. 1Հովհ. 3:2): Այսպիսով, մենք ծառայում ենք Տիրոջը, քանի որ վստահում ենք Աստծուն: Նրա խոստացածների մեծ մասը դեռ տեսանելի չէ, բայց մենք վստահում ենք նրան: Իսկ մենք նրան ծառայում ենք նաև երախտագիտությունից ելնելով այն մասի համար, որն արդեն տեսանելի է:

Դուք գիտեք, թե ինչպես ենք մենք ծառայում Տիրոջը: Մենք հավաքվում ենք ժամերգության ժամանակ՝ երկրպագելու Աստծուն և փառաբանելու նրա անունը: Մենք նաև ծառայում ենք Տիրոջը՝ ընդունելով Նրան որպես մեր Տեր և Վարդապետ: Սա մեզ համար կարևոր է: Ով ուզում է ծառայել Տիրոջը, նա պետք է ընդունի, որ նա Տերն է և ինքն էլ ծառա է; նա պետք է ընդունի նրա օրենքն ու պատվիրանները, նա պետք է ընդունի, որ Տիրոջ կամքը վեր է սեփական կամքից: Հիշենք Մարիամին՝ Հիսուսի մորը, երբ նրան ասացին, որ նա ծնելու է Աստծո Որդուն, նա վերջում ասաց հրեշտակին. «Ահավասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խոսքի համաձայն լինի ինձ» (Ղուկաս 1:38):

Մենք նաև ծառայում ենք Նրան՝ կատարելով մեր բաժինը Նրա փրկարար գործի մեջ: Մենք օգնում ենք մեր մերձավորին՝ գտնելու փրկության ճանապարհը և գնալու այդ ճանապարհով: Մենք ցանկանում ենք, որ նա մեր միջոցով բացահայտի այն սերը, որ Աստված ունի իր հանդեպ: Ահա թե ինչպես ենք մենք ծառայում Տիրոջը: Մենք երկրպագում ենք նրան, հնազանդվում ենք նրան և աջակցում նրա փրկության գործին:

Տարվա մեր կարգախոսն է՝ «Ծառայե՛ք և կառավարե՛ք Քրիստոսի հետ»: Իմ սիրելի երիտասարդներ, իմ սիրելի եղբայրներ և քույրեր, սա շատ կարևոր է՝ մենք ուզում ենք ծառայել Տիրոջը, բայց մենք ուզում ենք ծառայել նրան Քրիստոսի հետ: Մենք չենք ուզում ծառայել Աստծուն այնպես, ինչպես դա անում էր Հին Ուխտի ժողովուրդը: Մենք քրիստոնյա ենք: Մենք հետևում ենք Քրիստոսին, ուստի ցանկանում ենք ծառայել Քրիստոսի հետ: Քրիստոսը հստակ ցույց տվեց, որ մարդը չի ծառայում Տիրոջը՝ պարզապես հետևելով որոշակի կանոնների: Այն ժամանակվա հրեաները անելիքների երկար ցուցակ ունեին և հավատում էին, որ եթե ուղղակի դրանք կատարեն, ինքնաբերաբար կստանան Աստծո օրհնությունը: Ո՛չ: Հիսուսն ասաց, որ ամենակարևոր պատվիրանը սիրո պատվիրանն է՝ «Սիրիր Աստծուն և սիրիր քո մերձավորին» (հմտ. Մկ 12:28-34):

Ուստի պետք է Աստծուն ծառայել սիրուց ելնելով: Դա խնդիր էր Հին կտակարանում: Նրանք ծառայեցին Տիրոջը և պահեցին Նրա պատվիրանները, բայց արեցին դա օրհնվելու համար: Հետո, երբ դա ցանկալի արդյունք չտվեց, նրանք մտածեցին, որ ավելի լավ կլիներ ծառայել մեկ այլ աստծու, ինչ-որ կուռքի: Այս կերպ նրանք փորձում էին ստանալ այն, ինչ ուզում էին: Նրանք ծառայեցին Տիրոջը իրենց շահերից ելնելով: Նրանք իրենց ծառայության համար վարձ էին ուզում: Հիսուսը հորդորեց մարդկանց՝ ծառայել Աստծու հանդեպ սիրուց ելնելով:

Երբ սատանան եկավ նրան փորձելու, նա ասաց. «Պիտի երկրպագես քո Տեր Աստծուն և միայն նրան ծառայես» (Մատթեոս 4.7): Եկեք ծառայենք Քրիստոսի հետ: Մենք ծառայում ենք Աստծուն սիրուց ելնելով և միայն այդ պատճառով ենք ծառայում նրան: Մեզ ոչ մի այլ աստված, ոչ մի կուռք պետք չէ: Մենք ծառայում ենք Տիրոջը, քանի որ վստահում ենք նրան:

Աստծո հանդեպ սիրուց ելնելով մենք ծառայում ենք նրան իր փառքի և ոչ թե մեր փառքի համար: Մի անգամ Հիսուսը շատ պարզ խոսեց այն մարդկանց մասին, ովքեր մտան տաճար և մեծ զոհաբերություններ արեցին: Հետո նրանք վազեցին քաղաքով և փող հնչեցրին, որպեսզի բոլորն իմանան, որ իրենք զոհաբերություն են կատարել: Նրանք չէին ծառայում Աստծուն, այլ փնտրում էին իրենց փառքը: Նրանք, ովքեր չեն ծառայում Քրիստոսի հետ, ծառայում են իրենց փառքի համար. «Տեսե՛ք, թե որքան լավն եմ ես, տեսեք, թե ինչ եմ արել եկեղեցու և Տիրոջ համար»: Հիսուսն ասաց. «Երբ դու ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը, որպեսզի քո ողորմությունը ծածուկ լինի» (Մատթեոս 6:3-4): Ժամանակ առ ժամանակ ես կցանկանայի հիշեցնել մեզ Հիսուսի այս խորհրդի մասին՝ եկեք ծառայենք Աստծուն Քրիստոսի հետ ոչ թե մեր փառքի համար, այլ՝ Աստծո փառքի համար:

Հիշեք հարուստ երիտասարդի պատմությունը՝ նա ծառայում էր Տիրոջը, պահում պատվիրանները և շատ հարուստ էր: Երբ նա հարցրեց, թե ինչ պետք է անի հավիտենական կյանք ունենալու համար, Հիսուսն ասաց նրան. ,, Գնա վաճառիր քո ունեցվածքը ու տուր աղքատներին և արի իմ ետևից,,: Բայց խեղճ երիտասարդը չկարողացավ դա անել: Նա պատրաստ էր ծառայել Աստծուն, բայց՝ ոչ Քրիստոսին: Նրանց համար, ովքեր ծառայում են Աստծուն Քրիստոսի հանդեպ սիրուց ելնելով, Քրիստոսի հետ հաղորդակցվելն ավելի կարևոր է, քան երկրային հարստությունը կամ հաջողությունը: Քրիստոսի հետ ծառայելը նշանակում է, որ ինձ համար Քրիստոսի հետ միասնությունն ամենակարևորն է:

Պետրոսը ծառայում էր Քրիստոսին, բայց երբեմն չէր ծառայում նրա հետ: Երբ Հիսուսը հայտարարեց իր տառապանքի և մահվան մասին, Պետրոսը չցանկացավ հավատալ դրան: Աստծո Որդին, ով ծառայում էր Աստծուն, պետք է մեռնի՞: Դա պարզապես չէր կարող լինել: Հիսուսն ասաց նրան. «Հեռացի՛ր ինձնից, սատանա՛» (Մտ 16:23): Այս միտքը, որ ծառայելով Տիրոջը, կազատվեն տառապանքից և նեղությունից, ճիշտ չէ: Հիսուսն ասաց, որ նրանք, ովքեր հետևում էին իրեն, կտառապեն այնպես, ինչպես ինքը: Քրիստոսի հետ ծառայելը նշանակում է, որ ես պատրաստ եմ ծառայել Աստծուն, անգամ, եթե ես դրա համար տառապանք և նեղություն կրեմ:

Ես կցանկանայի նշել Աստծո մեկ այլ ծառային՝ Հովհաննես Մկրտչին, ով մեծ մարգարե էր և ծառայում էր Տիրոջը: Նա կատարեց իր հանձնարարությունը և հայտարարեց Մեսիայի գալուստը, բայց նա պատրաստ չէր ծառայել Քրիստոսի հետ: Նա ցանկանում էր, որ Աստված պատժի մեղավորներին և կարգի բերի երկիրը: Բայց դա Հիսուս Քրիստոսի առաջադրանքը չէր: Նա չէր եկել աշխարհը կառավարելու, նա չէր եկել մարդկանց երկրային խնդիրները լուծելու, նա չէր եկել մեղավորներին պատժելու: Նրա առաքելությունն էր փրկել մեղավորներին:

Շատ մարդիկ դավանում են, որ Աստծո ծառաներ են՝ հավատալով, որ իրենց գործը կարգուկանոն հաստատելն է և մեղավորներին պատժելը: Բայց Հիսուսն ասաց. «Իմ թագավորությունն այս աշխարհից չէ» (Հովհաննես 18.36): Ով ուզում է Աստծուն ծառայել, թող սիրի մեղավորներին և չպատժի նրանց: Երբ փարիսեցիները ցանկացան սպանել շնություն գործած կնոջը, նրանք նույնպես մտածեցին, որ ծառայում են Աստծուն: Սակայն, Հիսուսը նրանց հասկացրեց, որ նրանց գործը չէ պատժելը (տես Հովհ. 8.2-11): Եկեք ծառայենք Աստծուն Քրիստոսի հետ:

Մեկ այլ անգամ Հիսուսն ասաց, որ գեղեցիկ է, երբ մարդիկ զոհեր են մատուցում Աստծուն: Բայց եթե նրանք միաժամանակ չարացած լինեին հարևանի հանդեպ, կարող էին դա չանել, որովհետև դա արդեն ոչ մի իմաստ չէր ունենում: Նա ասաց. «Նախ գնա և հաշտվիր քո եղբոր հետ, իսկ հետո արի ու մատուցիր քո նվերը» (Մտ 5:24): Նա նկատի ուներ այն, որ մարդ չի կարող ծառայել Աստծուն՝ ատելով իր մերձավորին: Եկեք ծառայենք Տիրոջը Քրիստոսի հետ:

Վերջին մի կետի մասին աշակերտները մի անգամ վիճում էին, թե ով է իրենցից մեծը: Գաղափարն այն էր, որ գուցե այդպես մի փոքր ավելի լավը կլինեին, քան մյուսները: Հիսուսն ասաց. «Եթե մեկն ուզում է լինել առաջինը, թող լինի վերջինը և բոլորի ծառան»: Տիրոջը ծառայել նշանակում է ծառայել մերձավորիդ: Քրիստոսի հետ ծառայելը չի նշանակում տիրել և իշխանություն գործադրել ուրիշների վրա: Քրիստոսի եկեղեցում դրա համար տեղ չկա: Հիսուսն ասաց. «Որովհետև մարդու Որդին էլ չեկավ ծառայություն ընդունելու, այլ՝ ծառայելու» (Մարկոս 10,45):

Տեսեք, կան բազմաթիվ ասպեկտներ, թե ինչպես մենք պետք է ծառայենք Աստծուն, բայց մենք պետք է ծառայենք Նրան Քրիստոսի հետ՝ համաձայն Նրա ուսմունքի:

Հեսուն այստեղ ասում է, որ ինքը և իր տունը ցանկանում էին ծառայել Տիրոջը: Այսինքն՝ ինքը, բայց նաև բոլոր նրանք, ովքեր վստահված էին իրեն: Իհարկե, մենք նկատի ունենք նրան վստահված

սպասավորներին և հավատացյալներին: Մենք նկատի ունենք ծնողներին՝ իրենց երեխաների հետ: Կարծում եմ, որ նրանք բոլորն էլ ցանկանում են ծառայել Տիրոջը իրենց վստահողների հետ միասին, բայց մենք չենք կարող ստիպել որևէ մեկին՝ ծառայելու Տիրոջը: Մենք իրավունք չունենք դա անելու և դա նույնպես Աստծո կամքը չէ:

Աստված ուզում է, որ բոլորն ազատ լինեն ընտրության մեջ և ինքնուրույն որոշեն՝ ուզում են ծառայել իրեն, թե՝ ոչ: Այսպիսով, մենք չպետք է ստիպենք ուրիշներին դա անել: Շատ ծնողներ հասկացել են, որ իրենք չեն կարող ստիպել իրենց երեխային դա անել: Միակ բանը, որ մենք կարող ենք անել, դա նրանց մոտ մեր օրինակին հետևելու պահանջ առաջացնելն է:

Շրջանային առաքյալ Էդի Իսնուգրոհո

Շրջանային առաքյալ Քուբուբա Սոկո

Սա վերաբերում է նաև ձեզ, սիրելի երիտասարդ եղբայրներ և քույրեր: Դուք հետագայում ծնողներ կլինեք, բայց այսօր կարող եք դրդել ձեր մերձավորներին ծառայել Տիրոջը: Մի փորձեք համոզել նրանց, մի փորձեք սպառնալ նրանց, նրանց մի խոստացեք մի բան, որը վստահ չեք, որ իրականություն կդառնա, պարզապես փորձեք նրանց մոտ ձեր օրինակին հետևելու և Տիրոջը ծառայելու պահանջ առաջացնել, ինչպես դուք եք անում:

Ինչպե՞ս կարելի է դա անել: Նախորդ տողում ասվում է. «Արդ, դուք վախեցեք Տիրոջից և ծառայեցեք նրան շիտակությամբ և արդարությամբ» (Հեսու 24.14): Այս կերպ մենք կարող ենք դրդել մեր մերձավորներին և նրանց, ովքեր մեր խնամքի տակ են, ծառայելու Տիրոջը, երբ ինքներս էլ հավատարմորեն և շիտակությամբ ծառայենք:

Ես ասացի, որ մենք ծառայում ենք Տիրոջը երախտագիտությանից ելնելով, բայց եկեք ապացուցենք, որ մեր երախտագիտությունը իրական է: Հիշենք Իսրայելի ժողովրդին՝ ամեն անգամ, երբ նրանք փրկվում էին Աստծո կողմից, նրանք փառաբանում էին նրան, երախտապարտ էին նրան, իսկ մի քանի օր անց նրանք մոռանում էին ամեն ինչ, դժգոհում ու բարկանում էին Աստծուց: Մեր երախտագիտությունը իրական է, երբ այն բխում է խոնարհությունից: Մեր երախտագիտությունը իրական է, երբ մենք լիովին համոզված ենք, որ ամեն ինչի համար պարտական ենք Աստծուն որ այն ամենը, ինչ մենք ունենք, Աստծո շնորհից է և ոչ թե մեր վաստակից, շնորհից, զորությունից կամ որևէ այլ բանից: Խոնարհ մարդը գիտի. «Ես ոչ մի բան չեմ վաստակել: Այդ ամենը պարգև է, դա Աստծո ողջ շնորհն է»: Երբ դուք ունեք այդ վերաբերմունքը, ձեր երախտագիտությունը իրական է, և դուք կարող եք տեսնել և զգալ այն: Թող մեր երախտագիտությունը լինի ճշմարիտ և բխի խոնարհությունից, այդ դեպքում այն կշարունակվի և կխրախուսի մեզ՝ ծառայելու Տիրոջը:

Եկեք հաստատակամ լինենք Աստծո հանդեպ մեր վստահության մեջ նույնիսկ, եթե մենք պետք է երկար սպասենք մեր ծառայության արդյունքները տեսնելու համար, նույնիսկ, եթե օրհնությունը դեռ տեսանելի չէ: Մենք վստահ ենք, վստահում ենք Աստծուն և չենք դադարում վստահել, որովհետև մենք համոզված ենք՝ Աստված կպահի իր խոստումը: Նրան ծառայելը դադարեցնելու ոչ մի պատճառ չկա:

Մենք ունենք բազմաթիվ եղբայրներ և քույրեր այս երկրի վրա, ովքեր Աստծուն այս կերպ են ծառայում: Նրանց ծառայությունը կարծես թե որևէ հետևանք չունի: Տեսանելի արդյունքներ չկան: Բայց նրանք վստահում են և շարունակում են ծառայել Աստծուն, քանի որ նրանց վստահությունն անկեղծ է, և ես կարող եմ ձեզ ասել, որ այդ հաստատակամությունը մեծ տպավորություն է թողնում նրանց շրջապատողների վրա:

Եկեք նաև անկեղծ լինենք Աստծո հանդեպ մեր սիրո մեջ: Մենք ծառայում ենք Տիրոջը երախտագիտությունից, վստահությունից և սիրուց ելնելով: Եկեք անկեղծ լինենք Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր սիրո մեջ: Հարուստ երիտասարդ կառավարչի պատմությունը ցույց է տալիս, որ մեր հարաբերությունները Հիսուսի հետ ամենակարևորն են:

Գիտեմ, որ նախկինում բազմիցս ասել եմ, բայց նորից կասեմ, Քրիստոսի հանդեպ անկեղծ սիրո

Ձեռնադրվեց վեց առաքյալ՝ եպիսկոպոս Ջուլիոս Մաթհայո Մսամբուլան, ավետարանիչ Չարլես Գոդվին Անանգիսյեն, եպիսկոպոս Օբեդ Չիսենգան, եպիսկոպոս Միխայել Մախան, եպիսկոպոս Մաեքե Նջյունջյուն և շրջանային ավագ Ռինգ Մունկոմբվե Նդամբոն

վրա չի ազդում այն, ինչ տեղի է ունենում երկրի վրա: Երկրի վրա տեղի ունեցող ոչինչ չի կարող ոչնչացնել Քրիստոսի հանդեպ իրական սերը: Քրիստոսի հանդեպ անկեղծ սիրո վրա չի ազդում այլ մարդկանց վարքագիծը, նույնիսկ՝ մեծամասնության կարծիքը: Մարդիկ կարող են ասել այն, ինչ ուզում են, նրանք կարող են գրել և հրապարակել ինտերնետում այն, ինչ ցանկանում են, դա չի ազդում մեր սիրո, Հիսուսի հետ մեր հարաբերությունների վրա:

Նույնիսկ իմ վիճակը՝ հարուստ եմ թե աղքատ, հիվանդ եմ կամ առողջ, չի ազդում Քրիստոսի հանդեպ իմ սիրո վրա: Ես սիրում եմ Քրիստոսին, քանի որ նա սիրում է ինձ, և դրա համար էլ ես ծառայում եմ նրան: Նմանապես, մեր սերը մերձավորի հանդեպ պետք է անկեղծ լինի: Հիսուսի սերն այնքան մեծ է, որ նա ցանկանում է մեզ հետ կիսել իր զոհաբերության և հնազանդության արժանիքները: Նա ոչ մի մեղք չի գործել: Նրա սերը կատարյալ է, և, հետևաբար, նա առաջին մարդն էր, ով մտավ Աստծո փառքի մեջ, և նա մեզ չի խնդրում անել այն, ինչ արեց, քանի որ նա գիտի, որ մենք ի վիճակի չենք դա անել: Այդ իսկ պատճառով նա ցանկանում է իր վաստակը կիսել մեզ հետ:

Այսպիսով, նա, ով անկեղծորեն սիրում է իր մերձավորներին, ցանկանում է, որ նա ստանա այն, ինչ ինքն է ստանում, նա չի ցանկանում լինել մի փոքր ավելի լավը, քան մերձավորը կամ ունենալ նրանից մի փոքր ավելին: Մարդը չի կարող ավելին ունենալ, քան կատարյալ միասնությունը Աստծո հետ: Մարդը չի կարող ստանալ կամ դառնալ ավելին, որպեսզի լինի Հիսուս Քրիստոսի նման: Բայց երբեմն թվում է, թե սա կասկածի տակ է դրվում: Մարդը հաճույքով ուզում է մի քիչ ավելին ունենալ: Մարդն ուզում է առանձնահատուկ վարձատրություն: Ես շատ գոհ կլինեի, եթե կարողանայի նմանվել Քրիստոսին և մտնել Նրա փառահեղության մեջ: Իսկական բարեգործությունը չի պահանջում ունենալ ավելին, քան ձեր մերձավորը: Նա ցանկանում է, որ մերձավորը ստանա այն, ինչ ինքն է ստացել:

Մեկ վերջին կետ՝ անկեղծությունը կարելի է չափել այն զոհողություններով, որոնք մենք պատրաստ ենք անել, այն բաների մեջ, որոնցից մենք պատրաստ ենք հրաժարվել՝ Աստծո հետ կատարյալ միասնություն ունենալու համար ես հրաժարվում եմ այս կարծիքից, քանի որ այն հակասում է Հիսուս Քրիստոսի ուսմունքին: Ես ներում եմ իմ մերձավորին, որովհետև Հիսուսի հետ միասնության մեջ լինելու համար ես պետք է ներեմ նրան: Մեր անկեղծությունը չափվում է նաև այն զոհողություններով, որոնք մենք անում ենք Քրիստոսի հետ միասնության մեջ լինելու համար:

Երբ մարդիկ տեսնում են, որ իրենց քույր-եղբայրներիը, ծնողները կամ ընկերները անկեղծորեն և շիտակորեն ծառայում են Աստծուն, երբ նրանք տեսնեն, որ մենք իսկապես պատրաստ ենք ծառայել Աստծուն Քրիստոսի հետ, ծառայել Աստծուն, ինչպես որ Քրիստոսն է ծառայում, ապա նրանցից շատերը այնպես կարձանգանքեն, ինչպես այն ժամանակ արձագանքեց Իսրայելի ժողովուրդը՝ ,,Ուրեմն մենք էլ Տիրոջն ենք պաշտելու, որովհետև նա է մեր Աստվածը,, (Հեսու 24:18): Սա իմ ցանկությունն է ձեզ համար, սիրելի երիտասարդներ, և բոլորիս համար:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՔ

Մենք ծառայում ենք Աստծուն, քանի որ հավատում ենք Նրա խոստմանը և երախտապարտ ենք Նրան Նրա բարեգործությունների համար:

Մենք ծառայում ենք Նրան՝ հետևելով Հիսուս Քրիստոսի օրինակին: Մեր ջանքերի անկեղծության շնորհիվ մենք կարող ենք քաջալերել մեզ շրջապատողներին՝ ծառայելու Աստծուն:

Գերմանիայի համար շրջանային առաքյալի օգնականի կոչակոչումը

# Կրակը պետք է շարունակի վառվել

Նշվում են Սուրբ Ծնունդը և Զատիկը: Արդյո՞ք դա ավելին է, քան ավանդույթը: Դուք գիտեք խնդիրները և դրանց լուծումները: Ո՞վ կարիք ունի փրկչի: Այնուամենայնիվ, կայուն երջանկության և խաղաղության միայն մեկ ճանապարհ կա:

«Զգացողությունը նվազում է», - ասաց գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը 2022 թվականի դեկտեմբերի 11-ի ժամերգության ժամանակ Վիսբադենում (Գերմանիա): Իսկ դրանով նա նկատի ուներ այն ընկալումը, որ նաև քրիստոնյաները իսկապես Հիսուս Քրիստոսն ընդունեն որպես Փրկիչ: Մեկը լավ է: Մյուսները թեև տեսնում են խնդիրներ, սակայն և լուծում՝ առանց Աստծո: Եվ հետո դեռ կան այնպիսիք, ովքեր մտքում միայն մխիթարություն են տեսնում պարզամիտների ու կարիքավորների համար:

Այնուամենայնիվ, «երկրային բարիքներով և երկրային բաներով այս աշխարհում չես կարող հասնել լիարժեք, կայուն բավարարվածության»: Դրա համար կա միայն մեկ ճանապարհ:

## Միակ ճանապարհը

«Դուք կարող եք դա ունենալ միայն այն դեպքում, եթե միասնության մեջ եք Աստծո հետ»: Որպեսզի այնտեղ հասնեք, «դուք նույնպես պետք է լինեք հենց այնպիսին, ինչպիսին Աստված է ցանկանում», - պարզաբանեց գլխավոր առաքյալը: «Իսկ հաճախ ասում են՝ ես չեմ կարող: Ես չեմ կարող դա անել միայնակ! Ինձ Փրկիչ է պետք»:

«Այո, ձեզ պետք է Փրկիչ, և այդ Փրկիչը Հիսուս Քրիստոսն է»: - Աստծո Որդին, ով եկավ երկիր, հաղթեց չարին և ապահովեց մուտքը դեպի Աստված: «Սա է ձեր Փրկիչը, Նրա օգնությամբ դու կարող ես դառնալ այնպիսին, ինչպիսին Աստված է ցանկանում, որ դու լինես, որ դու լիովին համապատասխանես Աստծո կամքին: Եվ հետո դու երջանիկ ես լինում»:

«Այո, Աստված սեր է: Այո, Աստված ցանկանում է փրկել բոլոր մարդկանց: Այո, Հիսուս Քրիստոսը Փրկիչն է ողջ աշխարհի համար»: Բայց. «Նա ճանապարհ է սահմանել, և եթե ուզում եք փրկվել, պետք է գնաք այդ ճանապարհով»: Իսկ դա նշանակում է՝ հավատալ Հիսուս Քրիստոսին և

Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը առաքյալ Շթեֆան Փյոշելին տվեց Արևմտյան Գերմանիայի համար շրջանային առաքյալի օգնականի հանձնարարություն

ապրել ըստ նրա օրինակի: «Տերը դա շատ պարզ ասաց»:

## Օրինակը դրվագներում

«Թույլ տվեք նշել երեք կետ Հիսուս Քրիստոսի կյանքից, երեք հատկանիշ»,- ընդգծեց եկեղեցու առաջնորդը.

- «Նա ինտենսիվ կապ ուներ Աստծո հետ» - Իր ողջ կյանքի ընթացքում Հիսուսը գնում էր տաճար կամ ժողովարան՝ Աստծուն հանդիպելու: Եվ՝ «Աստծո հետ կապը միշտ փնտրել է աղոթքի մեջ»:
- «Նա միշտ մտահոգված էր կատարել Հոր կամքը: Նա պայքարում էր և պատրաստ էր հրաժարվել ամեն ինչից, քանի որ Հոր հետ միասնությունն ամենակարևորն էր նրա համար»:
- „«Նա եկել է ոչ թե կառավարելու, այլ՝ ծառայելու»: Նա ծառայում էր առանց նախապայմանների, առանց ակնկալիքների, առանց ուշադրություն դարձնելու հաջողությանը կամ անհաջողությանը:

«Այո, լավ՝ Հիսուս Քրիստոսը կատարյալ էր, մենք կատարյալ չենք: Մենք չենք կարող դա անել»:

Եզրակացություն. «Մեզ նույնպես պետք է Փրկիչ, Փրկող, Փրկարար»: Այն, ինչ մարդը չի կարող իրականացնել, Քրիստոսը լրացնում է իր շնորհով:

## Լուրջ հարցեր ինքներդ ձեզ

«Նա ձեզնից միայն մի բան է ակնկալում, որ դուք ազնիվ և լուրջ ջանքեր գործադրեք դրան հասնելու համար», - բացատրեց գլխավոր առաքյալը: «Մեզնից յուրաքանչյուրը, սկսած ինձնից, և ես դրան շատ լուրջ եմ վերաբերում, պետք է շարունակի իրեն հարց տալ՝ ինչպե՞ս է ինձ մոտ»: Իսկ ինչպիսի՞ն է, օրինակ, ժամերգությունների հաճախելը: «Դու կարող ես անել այն, ինչ ուզում ես: Դու որոշիր: Դու կարիք չունես հաշիվ տալու՝ ոչ եկեղեցու ղեկավարությանը, ոչ գլխավոր առաքյալին, ոչ առաջնորդին, այլ Հիսուս Քրիստոսին: Հետո գլխավոր առաքյալը հարց տվեց՝ ,, Ինչքա՞ն լուրջ եմ ես իմ ջանքերում, երբ ասում եմ՝ ,, Թող քո կամքը լինի,, ; երբ ես հավանաբար տարիներ ի վեր այլ կարծիք, այլ ըմբռնում, այլ գաղափար ունեմ և ես խորապես գիտեմ, որ Տեր Հիսուսը դա այլ կերպ է տեսնում, բայց ես պնդում եմ իմ տեսակետը,,: Եվ ,, «Որքա՞ն ազնիվ ես դու Աստծուն ծառայելու քո ցանկության մեջ, երբ դու չես կարողանում ինքդ քեզ տանել ժամերգության,- կներես այդքան կոպիտ լինելու համար,- Աստծուն փառաբանելու, գովաբանելու և երկրպագելու համար: Դու գալիս ես միայն այն ժամանակ, երբ ինչ-որ բան ես ստանում, երբ ինչ-որ բանի կարիք ունես: Բայց դու կարող ես նաև գալ և համագործակցել, որպեսզի մյուսներն էլ կարողանան ապրել ժամերգությունը»:

«Փրկիչը կկատարի իր հանձնարարությունը», - եզրափակեց գլխավոր առաքյալ Շնայդերը: «Մեր առաջադրանքը կայանում է նրանում, որ մենք հոգանք, որ փրկությունը շարունակվի առաջարկվել, որ Ավետարանը շարունակվի քարոզվել: Իսկ, եթե այսօր նրանք չեն ուզում լսել, ապա նրանք պետք է հնարավորություն ունենան վաղը կամ մյուս օրը լսել կարողանալու համար; իսկ կրակը պետք է շարունակի վառվել: Դա այն է, ինչի համար մենք կոչված ենք ծառայելու»:

## Հիմնական մտքեր

Հովհաննես Ա 4,14

Եվ մենք տեսանք ու վկայում ենք, որ Հայրն ուղարկեց իր Որդուն՝ աշխարհի Փրկիչ լինելու համար:

Մեզ փրկիչ է պետք: Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է: Նա փրկում է նրանց, ովքեր հավատում և հետևում են Իրեն: Մենք անկեղծորեն կապված ենք նրա հետ, վճռական ենք կատարել նրա կամքը և ծառայել:

# ՀԻՍՈՒՍԸ և ՍԱՄԱՐԱՑԻ ԿԻՆԸ

ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍ 4, 1-42-Ի

Հիսուսն իր աշակերտների հետ գնաց Գալիլիա: Նա անցնում էր Սամարիայով և հասավ Սիվքար քաղաք: Այնտեղ նա նստեց ջրհորի մոտ, որը տրվել էր Հակոբին:

Հիսուսը հոգնել էր երկար ճանապարհորդությունից հետո: Աշակերտները քաղաք են գնում, որպեսզի ուտելիք գնեն: Մի սամարացի կին է մոտենում, որպեսզի ջրհորից ջուր հանի: Հիսուսը ասում է նրան՝ ,, Ինձ խմելու ջուր տուր,,:
Կինը զարմանում է, որ Հիսուսը խոսում է իր հետ: Այդ ժամանակ հերաների վերաբերմունքը սամարացիների հանդեպ լավ չէր: Նրանք չէին ուզում սամարացիների հետ գործ ունենալ:

,, Եթե դու իմանայիր, թե ով եմ ես, -ասում է Հիսուսը,- դու ինձնից կենդանի ջուր կխնդրեի՞ր,,: Սամարացի կինը զարմանում է՝ ,,Տեր, սակայն դու դույլ իսկ չունես, և այս ջրհորը խորն է, ուրեմն դու որտեղի՞ց կունենաս կենդանի ջուր,,:
Հիսուսը պատասխանում է կնոջը՝ ,, Ով որ այս ջրից խմի, նորից կծարավի, բայց ով որ խմի այն ջրից, որ ես եմ տալու նրան, նա երբեք չի ծարավի,,: Կինը ասաց ,, Տեր, տուր ինձ այդ ջուրը, որպեզի չծարավեմ,,:

Հետագա զրույցից նա նկատեց, որ Հիսուսն իր կյանքի մասին ամեն ինչ գիտի: Նա հասկանում է, թե ով է նա: Նա վազում է քաղաքով և իր հետ բերում այլ մարդկանց:
Հիսուսը երկու օր մնում է քաղաքում և քարոզում է Աստծո խոսքը: Մարդիկ այդ կնոջն ասում են՝ ,, Այսուհետև քո խոսքերի համար չէ, որ հավատում ենք, որովհետև մենք ինքներս լսեցինք նրանից ու գիտենք, թե նա է ճշմարտապես Փրկիչն աշխարհի,,:

# ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՌՈԶԵԼԻՆ՝ ՍԵՏՈՒԲԱԼՈՒՄ / ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ/

Ողջույն: Իմ անունը Ռոզել է, ես յոթ տարեկան եմ և ապրում եմ Պորտուգալիայում, Սետուբալի մարզում: Այստեղ դուք տեսնում եք ինձ իմ փոքր եղբայր Էվանի հետ, նա չորս տարեկան է: Իմ ծնողների անուններն են՝ Քրիստինա և Պեդրո:

Մենք ժամերգությունների այցելում ենք Սետուբալի համայնքում: Լուսանկարում դուք տեսնում եք իմ ընկերուհուն և ինձ մեր եկեղեցու զոհասեղանի առաջ: Սետ ուբալ է կոչվում ոչ միայն մարզը, որտեղ մենք ենք ապրում, այլ նաև ծովափնյա նավահանգստային քաղաքներից մեկը:

Եթե մենք 40 կմ դեպի հյուսիս ենք մեկնում, հասնում ենք Լիսսաբոն: Այն Պորտուգալիայի մայրաքաղաքն է: Նրա խորհրդանիշներից մեկը Պոնտե 25 դե Աբրիլն է: Այն անցնում է Տախո գետի վրայով և իր 2278 մետր երկարությամբ աշխարհի երրորդ մեծ կախովի կամուրջն է: Նրա անունը հիշեցնում է այն օրը, երբ 1974 թվականին Պորտուգալիայի դիկտատոր տիրակալը տապալվեց:



Այս լուսանկարն արվել է իմ եղբոր կնունքի ժամանակ: Դուք տեսնում եք իմ ծնողներին, Էվանին, ինձ և մեր առաքյալ Դիմիտրիոս Դինիցին:

Թեև մենք պորտուգալացի ենք, Եվանը և ես ծնվել ենք Նորվեգիայում: Մեր ընտանիքն այնտեղ ապրել է յոթ տարի: Այստեղ դուք տեսնում եք իմ ծնողներին գլխավոր առաքյալի հետ, երբ նա այցելել էր Նորվեգիայի քույր-եղբայրներին: Լուսանկարում որտե՞ղ եմ ես: Իմ մայրիկի փորում:

Այն ժամանակ մենք պատկանում էինք Օսլոյի համայնքին: Այնտեղ ես նաև կիրակնօրյա դպրոց եմ հաճախել: Թեև ես հաճույքով եմ ապրում Պորտուգալիայում, միշտ կարոտում եմ այն ժամանակվա իմ ընկերներին:

Այստեղ՝ Պորտուգալիայում ունենք հաճելի կլիմա տաք շատ ամիսներով: Պորտուգալիան ունի երկար ափ Ատլանտյան օվկիանոսի երկարությամբ, որտեղ անհաշվելի լողափեր կան: Մենք հաճախ ենք ամբողջ ընտանիքով լինում լողափում, Էվանը և ես խաղում ենք ավազով: Քանի որ ես ապրում եմ գյուղում, ավելի շատ եմ լինում դրսում: Ես սիրում եմ տրամպոլին ցատկել, լողավազան գնալ և եղբորս հետ պարել:

Իմ սիրելի ուտեստը կոչվում է ալմոնդեգաս՝ պորտուգալական մսագնդիկներ՝ սպագետտիով:

Աղբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 01 2023, ձևավորումը՝ մասնավոր՝ andrei; Wel - stock.adobe.com



Լուսանկարը՝ gabriffaldi - stock.adobe.com

# Կանանց ձեռնադրություն՝ Հիսուս Քրիստոսը և եկեղեցին

Հին կտակարանի արարչագործությունների պատմությունները վկայում են տղամարդու և կնոջ հավասարության մասին: Որոշ առաքելական նամակներ, այնուամենայնիվ, տարբերություններ են դնում: Ի՞նչ է ասում Հիսուս Քրիստոսը այս մասին: Իսկ ինչպե՞ս է դրան վերաբերել Նորառաքելական եկեղեցին: - «Կանայք ձեռնադրված պաշտոնում» թեմայով ուսումնական գրվածքի երրորդ մասը

Նորառաքելական եկեղեցու դավանաբանությունը սովորեցնում է, որ Հիսուս Քրիստոսը «անմիջապես իր եկեղեցուն տվեց միայն մեկ ծառայություն, այն է՝ առաքյալների ծառայությունը» (ՆԱԵԴ7.4): Ավելին, ավելացվում է. «Հիսուս Քրիստոսն իր աշակերտներից ընտրեց տասներկու տղամարդու և նրանց առաքյալներ կարգեց (Մարկոս 3:13–19; Ղուկաս 6:13–16)“ (ՆԱԵԴ 7.4.2): Առաքելոց ծառայությունը վճռորոշ նշանակություն ունի եկեղեցում պաշտոնի ձևի և իմաստի համար: Հետևաբար, պետք է նաև հարց տալ, թե պաշտոնի և եկեղեցու համար իրականում ի՞նչ նորմատիվ հետևանքներ է լինում, որ Հիսուսը միայն տղամարդկանց է կանչել առաքյալ լինելու:

## Տասներկու առաքյալների ընտրությունը

Թեև Հիսուսը չէր կիսում իր ժամանակակիցներից շատերի վերապահումները կանանց վերաբերյալ, կանայք հետևում էին նրան և աջակցում աշակերտներին, նա առաքյալներ ընտրեց միայն տղամարդկանց: Ըստ Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի Ավետարանների, այսինքն՝ համատես Ավետարաններում հաղորդվում է տասներկու աշակերտների առաքյալներ նշանակելու մասին (Մտ 10:1-4; Մարկ 3:13-19; Ղուկաս 6:13-16):

Հարցին, թե ինչու Հիսուսն իր երկրային կյանքի ընթացքում առաքյալներ ընտրեց միայն տղամարդկանց, կարելի է պատասխանել տասներկու թվի տիպաբանական իմաստով: Իսրայելի նախահայրերը տղամարդիկ էին, ուստի այս առումով զուգահեռ պետք է անցկացվեր նրանց և Աստծո նոր ու համընդհանուր ժողովրդի «հայրերի» միջև, այսինքն՝ տասներկու առաքյալների:

Տղամարդկանց ընտրության համար, սակայն, կան նաև գործնական պատճառներ, որոնք կապ ունեն տվյալ պահին հասարակական վիճակի հետ: Քանզի Ավետարանը քարոզելու հրահանգը հանգեցրեց ծառայությունը տղամարդկանց վստահելու անհրաժեշտությանը, մանավանդ որ Հիսուսը առաքյալներին ուղարկվելիս բացահայտ պատվիրեց. ,,Հեթանոսների շրջաններով չգնաք և սամարացիների որևէ քաղաք չմտնեք» (Մտ 10:5): Այսպիսով, նրանք ստիպված էին սահմանափակել իրենց գործունեությունը միայն հրեա բնակչության շրջանում և, իհարկե, ինչպես ինքն էր անում, և ինչպես ընդունված էր մինչև առաջին դարի կեսերը, սինագոգներում հռչակեին Աստծո արքայության մոտալուտ լինելու մասին (Մարկոս 1,39; 6,1զ; Գործք 13:14; 17:17): Սակայն սինագոգի ծառայությանը կարող էին մասնակցել միայն տղամարդիկ, միայն նրանք իրավունք ունեին կարդալու Սուրբ Գրքից և բացատրելու դրանք: Կանայք այս ամենը չէին կարող անել հրեական համայնքների համատեքստում:

## Հատկանիշների վերաբերյալ հարցը

Եթե մեկը ձեռնպահ մնա Հիսուսի կողմից որպես առաքյալներ տղամարդկանց ընտրվելը կարգավորելուց՝ ժամանակի և մշակութային պատմության կամ նույնիսկ փրկության պատմության տեսանկյունից ելնելով, ապա կարելի է հավասար հիմնավորմամբ պահանջել, որ առաքելոց ծառայությունը բաղկացած լինի ոչ միայն տղամարդկանցից, այլև միայն հրեաներից, այդ դեպքում պետք է լինի միայն տասներկու տղամարդ և ոչ ավելին:

Տասնիններորդդարից ի վեր առաքելոց ծառայության մեջ անձնական զբաղվածությունը նույնպես տարակուսելի կլիներ, քանի որ Հիսուսն այն ժամանակ ընտրված առաքյալներից պահանջում էր «որ նրանք իր հետ լինեն» (Մարկոս 3:14),այսինքն՝ ուղեկցեն իրեն Պաղեստին իր շրջագայությունների ժամանակ:

Եթե այս պահանջը նաև ճշմարիտ առաքյալի հատկանիշ լիներ, ապա Պողոսն այլևս չէր կարող իսկական առաքյալ լինել: Հիսուսն ինքը էլ ոչ մի հիմնավորում չի տվել իր այս ընտրության համար: Այս առումով եկեղեցու համար սրանից որևէ նորմատիվ եզրակացություն չի կարելի անել:

Եզրակացություն՝ ՇԱՄԺ-ը 2021 թվականի մայիսին որոշեց. «Ըստ Նոր կտակարանի վկայության՝ Հիսուսը կանչեց միայն տղամարդկանց առաքյալներ լինելու: Նրանց վստահեց եկեղեցու ղեկավարությունը: Մենք չգիտենք Հիսուսի կողմից արված որևէ խոսք այն հարցի վերաբերյալ, թե արդյոք իր եկեղեցում կարող է պաշտոն տրվել նաև կանանց: Հիսուսի խոսքերից ու գործերից պարզ՝ չէ՝ կանանց ձեռնադրությունը հնարավոր է, թե՝ ոչ: Որոշումը մնում է Սուրբ Հոգու առաջնորդությամբ եկեղեցական կարգի համար պատասխանատու առաքելոց ծառայությանը»:

## Առաքելական սարկավագուհիների պատմություն

Կաթոլիկ- առաքելական և նաև նորառաքելական համայնքներում կային սարկավագուհիներ: Կաթոլիկ- առաքելական համայնքում սարկավագուհիները իրենց ծառայության համար՝ օրհնվում էին հրեշտակի կողմից, այսինքն՝

համայնքի առաջնորդի, Առաքյալի կողմից նրանք ոչ մի ձեռնադրություն չէին ստանում:

Ենթադրաբար, սարկավագուհիներ չեն ձեռնադրվել նաև նորառաքելական համայնքներում, սակայն ստացել են հատուկ օրհնություն: Պարզ չէ, թե ով է դա արել: Մինչև 1950-ականները այս սարկավագուհիները աշխատում էին համայնքներում՝ հիմնականում հովվական և բարեգործական առաջադրանքներ կատարելու համար: ,,Հարց ու պատասխանի,, 1952 թվականի համարում սարկավագուհիներն այլևս չէին հիշատակվում:

## Առանց վարդապետական հիմնավորման

Հետագա ժամանակաշրջանում կանանց ձեռնադրման հարցին վերաբերում էին մեծ վերապահումով: 1999 թվականին, այսինքն՝ գլխավոր առաքյալ Ֆեհրի պաշտոնավարման ժամանակաշրջանում ,, Պաշտոն հասկացության ,, վերաբերյալ հրապարակված «Գլխավոր առաքյալի հաղորդագրությունում» վերջին նախադասության մեջ կա հակիրճ նկատառում. «Նորառաքելական եկեղեցում կանայք ոչ մի հոգևոր պաշտոն չեն զբաղեցնում: Դրանում եկեղեցին հետևում է Հիսուսի օրինակին և գիտի, որ այն ներդաշնակ է Սուրբ Գրքի գրվածքներին»:

Հետագա տարիներին գլխավոր առաքյալներ Ֆեհրը և Լեբերը պարզապես վկայեցին, որ կանանց ձեռնադրությունը դեռևս բաց հարց է: Կնոջ և պաշտոնի խնդրի վերաբերյալ առաքելական ծառայության պաշտոնական և աստվածաբանորեն հիմնավորված պարզաբանում չկար:

## Դերը ներկայում և ապագայում

Այսօր կանայք ակտիվ են համայնքում բազմաթիվ առումներով: Նրանք ղեկավարում են կիրակնօրյա կամ նախակիրակնօրյա դպրոցը, տալիս են կրոնական կամ կոնֆիրմացիայի դասեր և ակտիվ են երիտասարդների հետ տարվող աշխատանքում: Խոսքը գործողությունների մի մասին է վերաբերում, որոնցում Ավետարանը տեղեկացվում և տարածվում է: Նրանք երգում են երգչախմբերում ձեռնադրված և չձեռնադրված տղամարդկանց հետ՝ պոեզիայում և աստվածաշնչյան տեքստերում արտահայտելով գովասանք, երկրպագություն և խնդրանք: Այս առումով այստեղ մի զարգացում կա, որը միանշանակ կանանց ձեռնադրության հարց է բարձրացնում:

Կանանց պաշտոնի լիազորություն շնորհելու հարցը առաջանում է նաև այն վարդապետության լույսի ներքո, որ տղամարդիկ և կանայք հավասարապես կանչված են առաջնեկության կամ թագավորական քահանայության, և որ նրանք բոլորը ստանում են հարություն առած Տիրոջ նման նոր մարմին: «Թագավորական քահանայությունը» կթագավորի Քրիստոսի հետ խաղաղության արքայությունում և կքարոզի Ավետարանը: Այս էսխատոլոգիական կոչումը, որը վերաբերում է ապագային, հուշում է, որ տղամարդիկ և կանայք արդեն կարող են ծառայել իրենց մերձավորների փրկությանը պաշտոնի լիազորության միջոցով:

Եզրակացություն՝ Մինչև 20-րդ դարի առաջին կեսը կանանց վստահվում էր սարկավագության պաշտոնը: Հետագայում դա չկրկնվեց՝ առանց հիմնավորման: Այսօր կանայք համայնքում ծառայում են որպես ուսուցիչներ և երիտասարդների ղեկավարներ: Պաշտոնի լիազորությունները կանանց շնորհելու հարցը ծագում է նաև այն համոզմունքից, որ տղամարդիկ և կանայք հավասարապես կոչված են լինելու առաջնեկներ և, հետևաբար կանչված են թագավորական քահանայություն:

## Աստվածաբանական գնահատական

Դիտարկելով Նոր կտակարանի վկայությունները պաշտոնի լիազորության և պաշտոնի հանձնարարության տեսանկյունից, կարելի է ամրագրել, որ դրանք չեն անդրադառնում պաշտոնի լիազորության խնդրին և քիչ փաստարկներ են տալիս, թե ինչու կանայք չեն կարող ստանալ այդ լիազորությունը:

Մի քանի բացասական հայտարարությունները, որոնք հիմնականում հանդիպում են հովվական նամակներում, վերաբերում են համայնքում տարբեր գործունեությանը և, հետևաբար, պատկանում են այն համատեքստին, որը հոգևոր պաշտոնի նորառաքելական ըմբռնման մեջ բնորոշվում է որպես պաշտոնի առաջադրանք: Հովվական թղթերն արգելում են կանանց ակտիվ լինել եկեղեցում՝ առանց բացատրելու, թե ինչու նրանց չի կարելի վստահել պաշտոն: Պաշտոնի լիազորության խնդիրը, հետևաբար, ոչ բացահայտորեն, ոչ էլ անուղղակիորեն չի արծարծվում Նոր կտակարանի համատեքստում:

Սա, անշուշտ, կապված է նաև այն փաստի հետ, որ Նոր կտակարանը սովորաբար չի պարունակում որևէ

մանրամասն հայտարարություն վարդապետության վերաբերյալ: Լավագույն դեպքում ակնարկներ կան Երրորդության, եկեղեցական խորհուրդների, եկեղեցու և հոգևոր պաշտոնի մասին: Այս թեմաների վերաբերյալ վարդապետական դիրքորոշումների զարգացումը իրականում սկսվում է միայն երկրորդ դարում, այսինքն՝ Նոր կտակարանային շրջանից հետո:

## Քրիստոսով ոչ մի տարբերություն

Հոգևոր պաշտոնում կանանց ձեռնադրության աստվածաբանական հիմավորումը կարող է տրվել միայն մարդաբանական (մարդկային էության վրա հիմված) և սոտերոլոգիապես (մարդու փրկության անհրաժեշտության վրա հիմված): Մարդու՝ Աստծո պատկերով ստեղծված լինելը – սա պետք է պարզ լինի – կանանց ձեռնադրության արդարացման հարցի հերմենևտիկ բանալին է: Աստծո պատկերով ստեղծված լինելը հիմքն է հանդիսանում մարդու և Աստծո ու Աստծո և մարդու միջև հիմնարար հարաբերությունների: Տղամարդն ու կինը երկուսն էլ Աստծո պատկերներն են, ուստի նրանք ուղղակիորեն առնչվում են հենց Աստծուն:

Մարդաբանորեն սա նշանակում է՝ տղամարդն ու կինը, կինը և տղամարդը հավասար արժանապատվություն ունեն և Աստծուց ստացել են նույն առաջադրանքը: «Աստված իր ազնվագույն արարածին տալիս է կենսունակություն և տրամադրում աստվածային էական հատկանիշների բաժին, ինչպիսիք են՝ սերը, անհատականությունը, ազատությունը, բանականությունը, անմահությունը» (ՆԱԵԴ 3.3.2): Թեև տղամարդն ու կինը ի սկզբանե Աստծո կատարյալ արարածներն են, բայց մեղքի մեջ ընկնելը նրանց հավասարապես վնասել է, այնպես որ նրանք տառապում են ժառանգական մեղքով և մեղք գործելու հակումով: Տղամարդը և կինը մեղավոր են և հավասարապես կարիք ունեն Աստծո ողորմածության և փրկության: Հետևաբար, կինը և տղամարդը հավասարապես սոտերիոլոգիապես կարիքավոր են:

Աստծո նվիրվածությունը մեղքի մեջ ընկած մարդուն վերաբերում է երկուսին էլ՝ Հիսուս Քրիստոսը մահացավ և տղամարդկանց և կանանց համար հավասարապես, և փրկությունը, որը նա վաստակել է, վերաբերում է նրանց երկուսին էլ: Եթե մարդիկ կարող են փրկություն ստանալ անկախ իրենց սեռից, ապա նրանք կարող են նաև անկախ սեռից ներգրավվել փրկության միջնորդության մեջ, այնքանով, որքանով դա տեղի է ունենում խոսքի և եկեղեցական խորհուրդների միջոցով:

Ըստ Պողոսի, Քրիստոսով չպետք է լինի տարբերություն հրեայի և հեթանոսի միջև, ստրուկի և ազատ մարդու, կամ տղամարդու և կնոջ միջև (Գաղ. 3.28): Այստեղ առաքյալի կողմից նշված բոլոր հավատացյալների Քրիստոսով լինելը եկեղեցու սկզբունքայնությունն ու հիմքն է կամ փրկության աջակցությունը: Պետք է նաև նկատի ունենալ, որ հարություն առած Հիսուսը ոչ տղամարդ է, ոչ էլ կին, քանի որ, ըստ Հիսուսի՝ հարություն առածները չունեն սեռականության հատկանիշ (Մարկոս 12:25):

Եզրակացություն՝ Նոր կտակարանի վկայությունները, որոնք խոսում են ժամերգությանը և եկեղեցական կյանքում կանանց մասնակցության դեմ, դրա համար որևէ հիմնավոր աստվածաբանական մեկնաբանություններ չեն տալիս: Այս տեքստերի մեծ մասն ունեն հստակ պրագմատիկ բնույթ և կապված են ժամանակի հետ: Պարզ է դառնում, որ հոգևոր պաշտոնում կանանց ձեռնադրության աստվածաբանական հիմավորումը կարող է լինել միայն մարդաբանական (հիմված մարդկային բնության վրա) և սոտերոլոգիական (հիմված մարդու փրկության կարիքի վրա):

Հավասարություն և հավասար արժանապատվություն Աստծո՝ Արարչի առջև, ոչ մի խոսք Հիսուս Քրիստոսից և հակասություններ առաքյալների նամակներում՝ սա աստվածաշնչյան հաշվառման արդյունքն է: Ի՞նչ վարդապետական հետևանքներ է քաղում Նորառաքելական եկեղեցին դրանից: Ահա թե ինչի մասին է «Կանանց ձեռնադրություն» թեմայով տեքստի հաջորդ և վերջին մասը:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասսե 2436, 8051 Ցյուրիխ/ Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233, 63263 Նոյ- Իզնեբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Սիմոն Հայինգեր

# Տեղեկատու

| | |
|---|---|
| 01.07.2023 | Կաբինդա (Անգոլա) |
| 02.07.2023 | Կաբինդա (Անգոլա) |
| 09.07.2023 | Հելսինկի (Ֆինլանդիա) |
| 16.07.2023 | Կինշասա (ԴՀ Կոնգո) |
| 18.07.2023 | Իդիոֆա (ԴՀ Կոնգո) |
| 23.07.2023 | Կանանգա (ԴՀ Կոնգո) |
| 30.07.2023 | Սաարբրյուքեն (Գերմանիա) |
| 06.08.2023 | Պերտ (Ավստրալիա) |
| 09.08.2023 | Ադելաիդե (Ավստրալիա) |
| 11.08.2023 | Տամա (Ճապոնիա) |
| 13.08.2023 | Խունխեոն (Հարավային Կորեա) |
| 17.09.2023 | Բերն-Օստերմունդինգեն (Շվեյցարիա) |
| 24.09.2023 | Էրիե (ԱՄՆ) |

New Apostolic Church
International